ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

12 ՀՈՒԼԻՍԻ, 2018 թ.
№ 10 (1027)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 53-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

«Դուք մեր կրթության դեսպաններն եք»

Մանկավարժական համալսարանում ավարտական վկայականների հանձնման արարողությունը, ինչպես միշտ, տոնական էր:

Մեկ օրում մանկավարժական համալսարանի առկա և հեռակա համակարգում բակալավրի և մագիստրոսի դիպլոմ ստացավ 2541 շրջանավարտ (1906-ը՝ բակալավրի, 635-ը՝ մագիստրոսի): Ուսման տարիներին լավագույնս դրսևորված 20 շրջանավարտի դիպլոմներ հանձնեց ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը:

Դիմելով ուսանողներին՝ նախարարը նկատեց, որ այսօրն առավել կարևոր է, քանզի նրանք իրենց կյանքի կարևոր մի էջ են փակում, բայց նաև էլ ավելի կարևոր մի էջ բացում են:

«Դուք մեր կրթության դեսպաններն ենք ու հավատացեք, որ ձեր գործունեությունից շատ ավելի մեծ բան է կախված, քան կարող եք պատկերացնել: Ձեր գոր-

➤ 2

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մանկավարժական համալսարանում հուլիսի 7-ին տեղի ունեցավ սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների բացման հանդիսավոր արարողությունը: 16 երկրից Հայաստան եկած ուսուցիչների վերապատրաստման դասընթացները կազմակերպում է ՀՀ ԿԳ նախարարությունը, իրականացնում Մանկավարժական համալսարանը:

Մանկավարժական համալսարանի ռեկտորը բացման խոսքում ասաց, որ քաղաքական նոր իրողությունը խանդավառություն է առաջացրել ոչ միայն հայրենիքում, այլև Սփյուռքում: Ռեկտորը վստահեցրեց, որ ամեն ինչ կկազմակերպվի պատշաճ մակարդակով, որ սփյուռքահայ ուսուցիչները, վերադառնալով իրենց երկրներ, նոր ոգով ու գիտելիքներով շարունակեն իրենց հայապահպան առաքելությունը:

«Այսօր մեկտեղվել եք մայր հայրենիքում՝ ամբարելու գիտելիքներ, մեր վաղվա օրը ավելի հայեցի պահելու համար աշխարհի տարբեր երկրներում»,-ասաց Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը:

Դիմելով ուսուցիչներին՝ նա ասաց, որ սփյուռքում մատաղ սերնդին դաստիարակելու համար միասին պետք է փնտրել և գտնել ուղիներ, վերապատրաստվելով ու հայրենիքում ստանալով հոգևոր, ֆիզիկական, մտավոր զորություն՝ յուրաքանչյուր ուսուցիչ պիտի վերադառնա իր երկիր՝ շարունակելու հայապահպան գործունեությունը:

ՀՀ ԿԳ փոխնախարար Հովհաննես Հովհաննիսյանը ողջունեց սփյուռ-

➤ 3

«Դուք մեր կրթության...»

➢1 ծունեությունից է կախված, թե ինչպիսին կլինեն մեր աշակերտն ու վաղվա ապագան. շրջանավարտը դուրս կգա դպրոցից ազատ, անկախ, թե կաղապարված, քննադատող ու վերլուծող, թե անգիր անող»,- ասաց Արայիկ Հարությունյանը:

Նախարարը նկատեց, որ ուսուցչի վարկանիշը բարձրացնելը ազգային անվտանգության խնդիր է. «Ընդհանուր կրթության մակարդակի անկումն ազգային անվտանգության խնդիր է, և այդ խնդիրը լուծելու ճանապարհին Մանկավարժական համալսարանը մեծ դերակատարություն ունի»,- ամփոփեց Արայիկ Հարությունյանը:

Օրհնանքի խոսք հղեց գերաշնորհ տեր Նաթան Արքեպիսկոպոս Հովհաննիսյանը: «Մարդն իր կյանքում անպայման ունենում է ուսուցիչ, բոլորիս հիշողության մեջ, հոգում և սրտում մեր ուսուցիչները մնում են որպես վառ կերպարներ: Մանկավարժներն ամբողջ կյանքում պատասխանատու են իրենց դաստիարակած աշակերտների համար: Ուսուցչի կոչումը միայն գիտելիք հաղորդելը չէ, ուսուցչի կոչումը հոգեբանորեն մարդ արարելն ու ստեղծելն է, անձ կերտելը»,- ասաց Նաթան Հովհաննիսյանը:

Արքեպիսկոպոսը ուսանողներին մաղթեց, որ ապագա աշակերտներն իրենց կյանքի բոլոր օրերում նրանց հիշեն լույսի և ժպիտի մեջ, որպես իրենց ամենահարազատին, կյանքին և հոգուն լույս ու ջերմություն տվողին: «Այն ճանապարհը, որը պետք լինի շատ դժվարին, բայց կարող է տալ այնպիսի առատ բերք ու բույր, որ մեր ազգը կարողանա այդ սերունդներով շարունակել մնալ հայ քրիստոնյա, և աշխարհում, իբրև կերտող ժողովուրդ, շարունակել ունենալ պատիվ և հարգանք»,- նշեց Նաթան Հովհաննիսյանը:

Բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ Աննա Սարգսյանը բոլոր ուսանողների անունից շնորհակալություն հայտնեց բուհին՝ ուսումնառության ողջ ընթացքում իրենց կողքին լինելու և գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով զինելու համար: «Մանկավարժական համալսարանում է, որ ստացանք կայուն գիտելիքներ, փորձ և հմտություն, որոնք ծառայեցնելու ենք ի նպաստ մեր հայրենիքի զարգացման ու բարգավաճման, ուստի ուրախ ու հպարտ ենք, որ այս բուհի ուսանողն ենք եղել, խոստանում ենք բարձր պահել բուհի վարկը և երբեք չմոռանալ, որ մեր երազանքի հիմնաքարերն այստեղ են դրվել»,- ասաց Աննա Սարգսյանը:

2017-2018 ուսումնական տարվա ավարտական վկայականների հանձնման արարողությունն ավելի տոնական դարձնելու համար համերգային գեղեցիկ ծրագրով հանդես եկան Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախումբը, Մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի ջութակահարների և պարարվեստի մանկավարժության ամբիոնի անսամբլները:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

➢ 1 քահայ ուսուցիչներին և բարձրաձայնեց, որ վերջին տարիներին խաթարվել էր հայ ուսուցչի կերպարը: Նա վստահեցրեց, որ ուսուցչի կերպարը պետք է վերազարթոնք ապրի և դառնա այն պատվարը, որի վրա հենվելու է կրթական համակարգը:

Փոխնախարարը նոր Հայաստանում վերապատրաստման դասընթացներին մասնակցելու եկած ուսուցիչներին ասաց, որ նրանք մեծ բեռ ունեն իրենց ուսերին՝ ծուլման վտանգի դեմ հայապահպանության ամենօրյա պայքարով: Նա կարևորեց սփյուռքահայ ուսուցիչների դերակատարությունը հայ գաղթօջախներում, վստահեցրեց, որ Հայաստանը մշտապես սատարելու է նրանց, փաստելով, որ Սփյուռքն էլ առանց հայրենիքի չի կարող գոյություն ունենալ:

Ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը ողջունեց ուսուցիչներին, որոնք ստանում են ոչ բարձր աշխատավարձ, բայց կատարում են հասարակության մեջ տեղ ու դեր, առաքելություն ունեցող ու սերունդների մեջ ապագայի տեսլական սերմանող աշխատանք:

Նա կարևորեց համահայկական դասագրքերի ստեղծման գործը, ապա հավելեց. «Բարեբախտություն է, որ հայ ուսուցիչն իր տեղում է և կարողանում է սփյուռքում հայ մանուկին հայ պահել»:

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալիտա Դոլուխանյանը երջանիկ է, որ սփյուռքահայ ուսուցիչներին հայ հին գրականություն է դասավանդելու: Նա վստահեցնում է, որ վերապատրաստման համար ընտրված են հիանալի մասնագետներ, որ ուսուցիչներն այստեղ շատ նորություններ կիմանան, իսկ բուհի մասին պատմող ֆիլմը դիտելիս նկատեցին Մանկավարժական համալսարանի առաջընթացը:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանի կարծիքով խնդիրը ոչ թե հայապահպանության գործոնն է, այլ գործի գիտակցության կարևորությունը: «Այն ճգնաժամը, որի միջով անցնում է ուսուցիչը, իսկապես վերափոխվելու կարիք ունի, և մեզ համար ամենակարևորը Սփյուռքում հայ ուսուցչի տեսակի վերակազմակերպումն է»:

Պրոֆեսորը սփյուռքահայ ուսուցիչներին Մանկավարժականում որպես մագիստրոսներ տեսնելու իր ցանկությունը հայտնեց և հաստատեց նրանց համար այդ ուսումնական գործընթացի կազմակերպման կարևորությունը:

«Այն աշխատանքը, որ իրականացնում է սփյուռքահայ ուսուցիչը, ծանր խաչ է, իսկ հայկական փակվող դպրոցների, լեզվի խնդիրների թնջուկը լուծելու առաջին քայլերը հայրենիքում միասին պետք է դնենք և դնենք սիրով ու ջերմությամբ»,-ամփոփեց Ս. Դանիելյանը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՌԵԿՏՈՐԻՆ

15 երկրից 62 ուսուցիչ Հայաստանում է վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար: Հուլիսի 7-ին ՀՊՄՀ «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանի ուղեկցությամբ նրանք հանդիպեցին համալսարանի ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Միրզախանյանին՝ կիսելու իրենց մտահոգությունները Սփյուռքի հայ գաղթօջախներում հայկական կրթական հաստատությունների խնդիրների շուրջ:

Ռեկտորը ուսուցիչներին ներկայացրեց 96-ամյա բուհի պատմությունն ու կրթական զարգացումների դինամիկան, խոսեց համալսարանի մասնագիտությունների ու միջազգային կապերի, ինչպես նաև ուսանողների փոխանակման տարբեր ծրագրերի մասին:

Սփյուռքը բազմաշերտ է, հետևաբար ուսուցիչների մտահոգություններն էլ տարբեր են. տարբեր են Թուրքիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Եվրոպայում, Ամերիկայում, Մերձավոր Արևելքում և աշխարհի այլ վայրերում գործող հայկական կրթական հաստատությունների խնդիրները: Ռեկտորին հարցեր ուղղեցին Հայկանուշ Գասպարյանը (Սիրիա), Սիմոն Պետիկյանը (Ամերիկա), Ռուզանա Մարտիրոսյանը (Ուկրաինա), Ամալյա Թադևոսյանը (Ռուսաստանի Դաշնություն), Զարուհի Սիմոնյանը (Բելառուս) և ուրիշներ:

Բոլորի մտահոգությունները գրեթե մեկ ընդհանրություն ունեին՝ միասնական դասագրքերի ստեղծման անհրաժեշտություն, երիտասարդ ուսուցիչների պարբերաբար վերապատրաստում, մանկավարժական կադրերի պատրաստում հայրենիքում, հայերեն չխոսող հայ երեխաներին որպես օտարալեզու խոսողների՝ ուսուցանելու մեթոդների բացակայություն և աջակցության ակնկալում…

Սփյուռքահայ ուսուցիչների մի մասը Մանկավարժական համալսարանի շրջանավարտներ են: Նրանք ուրախ են հարազատ բուհում հյուրընկալվելու համար:

Ուսուցիչները նաև ոգևորված են Հայաստանում կատարված փոփոխություններով, առավել բարգավաճ ու վերսլաց Հայաստանի նոր պատկերով:

Հայկանուշ Գասպարյանն անկեղծանում է՝ վերջին 25 տարում չի եղել նման բարձր որակի ու մակարդակի վերապատրաստումներ, ինչի կարիքը հատկապես զգում են պատերազմի պատճառով քայքայման եզրին հայտնված Հալեպի և Բեյրութի հայ համայնքների կրթական հաստատությունների ուսուցիչները:

➢ 4

...ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՌԵԿՏՈՐԻՆ

➢3 Ռեկտորը հիմնականում ծանոթ է Սփյուռքի հայ համայնքներում գործող դպրոցների վիճակին: Նրա կարծիքով պետք է հնարավորինս պահպանել այդ դպրոցները, որովհետև նրանք հայապահպանության խնդիր են լուծում: Ուսուցիչների վերապատրաստման հարցերը բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում են, սակայն դասագրքերի հարցով զբաղվում է ԿԳ նախարարությունը: Եթե դասագրքերի ստեղծման գործը հանձնարարվի բուհին, մեր լավագույն մասնագետները կարող են պատշաճ մակարդակով կազմակերպել:

Միացյալ Նահանգներում կրթության գործին նվիրված Սիմոն Պետիկյանը ահա-

զանգում է՝ 10 տարի հետո ամերիկահայ գաղութների մեջ հայ ուսուցիչ չի մնա: Նա հորդորում է Սփյուռքի երիտասարդ կադրերից հայրենիքում ուսուցիչ պատրաստելու ուղիներ գտնել:

Ռոստովից Հայաստան եկած Լուսինեն խոսում է դասընթացի բարձր մակարդակի ու կազմակերպվածության, դասերից դուրս հետաքրքիր հանդիպումների ու տեսարժան վայրեր այցելությունների մասին, նաև առաջարկում է ավելացնել որոշ մառարկաների ուսուցման ժամաքանակը:

Կիևում նաև մեծահասակ հայերի հետ աշխատող Ռուզաննա Մարտիրոսյանը խնդրում է ուկրաինական որևէ բուհում հայկական ամբիոն կամ ֆակուլտետ բացելու հնարավորությունները դիտարկել:

Ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը վստահեցնում է բոլոր հնարավորությունների

սահմաններում աջակցել սփյուռքահայ ուսուցիչներին՝ հաշվի առնելով հայ գաղթօջախների յուրահատկությունները:

Դասընթացները համակարգող բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը, ով տարիներ շարունակ շփվում է սփյուռքահայ ուսուցիչների հետ և լավ գիտի նրանց խնդիրները, շնորհակալություն է հայտնում ռեկտորին հանդիպման և հանրապետությունում կրթական եզակի հարթակ ստեղծելու, իսկ կրթության և գիտության նախարարությանը՝ լավագույն աջակցության համար: Պրոֆեսորը ևս փաստում է, որ խնդիրները շատ են, իսկ դրանց լուծման ուղիներն ու մոտեցումները՝ տարբեր, որովհետև ծրագրերից, դասագրքերից զատ նաև կա երկակի ստանդարտների խնդիր՝ արևմտահայ և արևելահայ լեզուներով խոսող համայնքներին տարբերակված ու անհատական մոտեցումներ ցուցաբերելու անհրաժեշտություն:

Ուսուցիչներն արդեն հասցրել են լինել Ծիծեռնակաբերդի համալիրում, Մատենադարանում, Հովի. Թումանյանի տուն-թանգարանում, Սևանում, Հաղարծինում, Գոշավանքում, Գառնիում և Գեղարդում: Հուլիսի 22-ին նրանք կայցելեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Հայապահպանության առաքյալները անմոռանալի տպավորություններ կտանեն իրենց հետ՝ շաղախված հայրենիքի սիրով ու ջերմության անպարագիծ դրսևորումներով, որ շարունակեն օտար երկրում հային հայ պահելու բարդ ու պատասխանատու գործը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» մեդալ՝ կիրակնօրյա դպրոցի տնօրենին

Մանկավարժական համալսարանի ռեկտորատի հունիսի 26-ի նիստում ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը «Մանկավարժական համալսարան» մեդալով արգևատրեց ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» կիրակնօրյա դպրոցի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանին:

Շ. Փահլևանյանը երկար տարիներ ապրում և աշխատում է Մոսկվայում: Նա ավարտել է Երևանի հմ. 114 դպրոցը, Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Մոսկվայի Հայկական 2-րդ նրբանցքի նախկին Լազարյան ճեմարանի շենքում գործող դպրոցը վերջերս նշեց հիմնադրման 30-ամյակը: Դպրոցը, որտեղ սովորում են տարբեր տարիքի հայ երեխաներ՝ 4-ից մինչև 25 տարեկան, որոնք ընդգրկված են նախադպրոցական, դպրոցական, միջին ու բարձր դասարաններում, արդյունավետ գործունեություն է ծավալում հայապահպանության ուղղությամբ, իրականացնելով ամենօրյա հայանպաստ աշխատանք և հայ երեխաներին հայ պահելուն միտված տարբեր ծրագրեր: Այստեղ հաճախում են նաև խառնածին ընտանիքի երեխաներ, ինչպես նաև հայերեն սովորել ցանկացող Մոսկվայում և նրանից դուրս բնակվող ռուս և այլազգի ներկայացուցիչներ:

Դպրոցը հիմնադրվել է 1988 թվականին Մոսկվայում՝ Հայաստանի մշտական ներկայացուցչության և Մոսկվայի հայկական համայնքի նախաձեռնությամբ, Հայաստանի Լուսավորության մինիստրության աջակցությամբ և Ամենայն Հայոց Վազգեն Առաջին Կաթողիկոսի օրհնությամբ: Դպրոցն իր գոյության տարիներին տվել է շուրջ 3000 շրջանավարտ:

Համալսարանի ռեկտոր Ռ. Միրզախանյանը շնորհավորեց դպրոցի տնօրեն Շողիկ Փահլևանյանին 30 տարի դպրոցում անընդմեջ հայոց լեզու դասավանդելու համար և մաղթեց հայրենանվեր գործունեության անխափան շարունակականություն, ինչպես նաև համագործակցություն մեր համալսարանի հետ:

Շ. Փահլևանյանը շնորհակալություն հայտնեց 30-ամյա աշխատանքը գնահատելու համար, հուզմունքով փաստեց, որ սա հայրենիքում ստացած իր առաջին պարգևն է, ապա վստահեցրեց, որ հայրենիքից հեռու գտնվող երեխաներին կշարունակեն պահել հայրենիքին մոտ և հայապահպան միջավայրում կազմակերպել նրանց ուսումն ու դաստիարակությունը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Քննարկվեցին հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրները

Մանկավարժական համալսարանում տեղի ունեցավ կլոր սեղան-քննարկում նվիրված ՀՀ-ում հաշմանդամության ոլորտում իրականացող բարեփոխումներին, և Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիայի միջազգային դասակարգման մարտահրավերներին:

Քննարկմանը մասնակցում էին հաշմանդամության ոլորտի միջազգային փորձագետներ Ստատիս Տրիանտաֆիլուն, Անդրեաս Կարիստինոսը, ՄԱԿ-ի գրասենյակի մանկական հիմնադրամի և զարգացման ծրագրերի ներկայացուցիչներ, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ Աննա Հակոբյանը, ինչպես նաև ՀՊՄՀ-ի Հատուկ կրթության ֆակուլտետի և սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը: Քննարկման ընթացքում մասնագետներն անդրադարձան հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների գնահատման գործիքների կառուցվածքին, կիրառությանը, նաև վերջիններիս ստանդարտացման կարևորությանը Հայաստանում:

ԱՍՀ նախարարության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ Աննա Հակոբյանը նշեց, որ հատուկ մանկավարժության ոլորտում դասավանդող մասնագետների դերը կարևոր է և վճռորոշ այս գործիքակազմի ստանդարտացման և արդիականացման գործընթացում: Ա. Հակոբյանը նկատեց, նաև, որ Մանկավարժական համալսարանի շրջանավարտների դերը հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունների մատուցման գործընթացում՝ բարձր գնահատելով այն ուսանողների աշխատանքը, ում հետ տարբեր ծրագրերի շրջանակներում նախարարությունն աշխատանք է ծավալել:

Կլոր սեղան-քննարկման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա քայլերի մշակման և իրականացման վերաբերյալ, որոնց առաջնահերթությունը ընդգծեցին նաև միջազգային փորձագետները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱՇԽԱՐՀԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿՏԱՎՆԵՐՈՒՄ

Հայաստանի ազգային պատկերասրահում բացվեց Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակին նվիրված գեղանկարչության միջազգային պլեների մասնակիցների աշխատանքների ցուցադրությունը:

Սիմպոզիումին մասնակցում էր 6 երկրից՝ Ռուսաստանից, Լեհաստանից, Վրաստանից, Լատվիայից, Լիտվայից և Հայաստանից Երևան ժամանած 17 գեղանկարիչ և ՀՊՄՀ-ի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի 10 ուսանող:

Կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը ողջունեց նախագիծը և շնորհավորեց նկարիչներին գեղեցիկ ցուցադրության առթիվ: Նախարարը նկատեց, որ միջազգային համագործակցությունը, հատկապես արվեստի և կրթություն ոլորտում, շատ կարևոր է: Ա. Հարությունյանը նախարարության անունից պատրաստակամություն հայտնեց աջակցել նման հետաքրքիր նախաձեռնություններին:

Ազգային պատկերասրահի տնօրեն Արման Ծատուրյանը շնորհավորեց պլեների մասնակիցներին և վստահեցրեց, որ մշակույթը շատ հզոր է, բայց այն չպետք է պահել ներսում. «Մշակույթը չի կարող բազմազան լինել, եթե նրանում չներգրավվեն նաև օտարազգի արվեստագետները»:

ՀՀ ժողովրդական նկարիչ Փարավոն Միրզոյանը բազմիցս մասնակցել է միջազգային պլեներների և կարծում է, որ նման պլեներները մեծ նշանակություն ունեն մեր երկրի համար. «Մեզ թվում է, թե բոլորը մեզ ճանաչում են: Նրանցից շատերն առաջին անգամ են Հայաստանում. հիացած են, ոգևորված: Մասնակիցներից ոմանք էլ անվանի նկարիչներ են, որոնք ունեն միջազգային ընդլայնված կապեր ու արդեն իսկ հետաքրքրված են մեզանով»:

Նա կարևորեց նաև պլեներին ուսանողների մասնակցությունը, ճանաչված նկարիչների հետ նրանց շփումն ու Հայաստանի Ազգային պատկերասրահում համատեղ ցուցադրությունը:

10-օրյա պլեների ընթացքում նկարիչների հետ միասին ստեղծագործել են նաև ապագա նկարիչ-մանկավարժները:

Մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Հերիքնազ Խաչիկյանն առաջին անգամ է մասնակցում միջազգային պլեների: Հերիքնազը կարծում է, որ սա լավագույն հնարավորությունն է ոչ միայն իրենց դասախոսների, այլև՝ միջազգային ճանաչում ունեցող նկարիչների հետ բնության մեջ նկարելու: Հերիքնազը նկատում է՝ այս օրերին հասցրել են ծանոթանալ միմիանց մշակույթներին և ազգային առանձնահատկություններին:

«Ծանոթացանք հայ և օտարազգի նկարիչների աշխատելաոճին, գույների ընտրությունը և այլն: Օրինակ, այլազգի նկարիչների մոտ ավելի շատ գերակշռում են սառը գույները, իսկ հայերս նախընտրում ենք առավել տաք գույներ... Կարծում եմ դա հենց մեր միջի արևն ու տաքությունն է, որն արտացոլվում է մեր կտավներում»,- ասաց Հերիքնազը:

Պլեների ընթացքում ավելի շատ շփվել են նկարիչ-մանկավարժների հետ: Բացի հիանալի օրեր անցկացնելուց, լավ ընկերներ ձեռք բերելուց Հերիքնազի համար ամենակարևոր ձեռքբերումներից է նաև Ազգային պատկերասրահում ցուցադրվելու հնարավորությունը:

Մասնակիցները շնորհակալություն հայտնեցին միջազգային պլեների կազմակերպիչներին և խոստովանեցին՝ անցկացրել են հիանալի օրեր, վայելել հայկական բնաշխարհի գեղեցկությունը, իսկ զգացողություններն արտահայտել են կտավներում:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

Ցավով ու ափսոսանքով հայտնում ենք, որ մահացել է Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, 1999-2002 թվականներին ՀՊՄՀ ռեկտոր, ԵՊՀ կենսաքիմիայի ամբիոնի վարիչ Միսակ ԴԱՎԹՅԱՆԸ: Որպես հիշատակի տուրք, ներկայացնում ենք բուհի 90-ամյակի առթիվ նրա հարցազրույցը «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթին:

«Ես հավատում եմ Մանկավարժական համալսարանի հաջողություններին»

«Ես հավատում եմ Մանկավարժական համալսարանի հետագա հաջողություններին. նա բոլոր ժամանակներում պատվով է կատարել իր առաքելությունը և պատրաստել մանկավարժների գրագետ սերունդ»,- այսպես նշանավորեց 90-ամյա պատմություն ունեցող բուհի գործունեությունը նախկին ռեկտորը: Քաջատեղյակ լինելով կրթության ոլորտի խնդիրներին՝ նա հեշտությամբ չի ընդունել ռեկտորի պաշտոնը ստանձնելու առաջարկը: Տարիների հեռվից Միսակ Դավթյանը հիշում է իր պաշտոնավարման տարիները, երբ արմատական վերափոխումներ էին տեղի ունենում բոլոր բուհերում, այդ թվում նաև՝ Մանկավարժական ինստիտուտում: Կրթական ավանդական համակարգը պետք է ավելի մոտեցվեր արևմտյանին, որի հետ կապված բազմաթիվ հարցեր էին ծագում հատկապես հումանիտար առարկաների վերաբերյալ:

«Բոլոր ժամանակներում կրթության վերափոխման հարցը եղել է օրակարգային: Այդ գործում Մանկավարժական համալսարանը՝ ի դեմս իր գիտնական-դասախոսների, միշտ էլ գտնվել է բարձրության վրա և կրթական էական փոփոխություններում ունեցել իր մեծ ավանդը»,- նշեց Միսակ Դավթյանը:

Նա չի սիրում թվարկել իր պաշտոնավարման տարիներին Մանկավարժականի ունեցած բազում ձեռքբերումները. առանձնացնում է միայն, որ կարևորագույն հարցերի լուծման ժամանակ իր աշխատելաոճում առաջնորդվել է կոլեկտիվի սկզբունքով՝ յուրաքանչյուր հարցի շուրջ համախմբելով առավել շատ դասախոսների: Անդրադառնալով ներկայիս դասախոսների որակական հատկանիշներին՝ գիտնականը նշեց. «Լավ դասախոսն առաջին հերթին պետք է լինի լավ գիտնական ու հետազոտող. նրա աշխատանքի հիմքը պետք է ունենա գիտական մոտեցում, որպեսզի խորն ընբռնի յուրաքանչյուր փաստի էությունը»:

Համեմատելով տարբեր սերունդներին՝ Միսակ Դավթյանը նկատում է. «Այսօրվա ուսանողներն ավելի մեծ ձգտում ունեն կրթվելու և գիտության մեջ ներգրավվելու. գիտահետազոտական աշխատանքներին անմիջական մասնակից դարձնելու համար պետք է նրանց ուսուցումը կազմակերպել հենց գիտական միջավայրում»:

Միսակ Դավթյանը ուսանողների հետագա հաջողությունները կապում է դասախոսների ճիշտ աշխատանքի հետ. դասախոսի մեջ պետք է պարտադիր մեկտեղվեն մարդկային բնավորության լավագույն հատկանիշներն ու լավ մասնագետ լինելը: Դասավանդման բազմամյա վաստակ ունեցող դասախոսը ուսանողների և իր միջև երբևէ արհեստական սահման չի պահպանել. ուսանողը շատ զգայուն է, նրա հանդեպ պետք է դրսևորել առավելագույն օբյեկտիվություն: Միսակ Դավթյանը բուհի որակը որոշում է նրանում աշխատող կադրերով. չէ՞ որ համաշխարհային ճանաչում վայելող համալսարաններն աչքի են ընկնում պրոֆեսորադասախոսական կազմի բարձր վարկանիշի շնորհիվ: Տարբեր պաշտոններ վարելիս նա երբևէ չի դադարել ղեկավարել ԵՊՀ կենսաքիմիայի՝ իրեն հարազատ դարձած ամբիոնը, որի աշխատակիցներն իր համախոհներն են և գիտական առաջընթացի հիմնական ուղեկիցը: Միսակ Դավթյանը վստահեցնում է՝ բուհի ղեկավարի պաշտոնում վերընտրվելու դեպքում կփորձի ավելի անմիջական դարձնել դասախոսների հետ կապը. նրանց գնահատելու, գիտական մակարդակը պարզելու համար պետք է ղեկավարն անմիջական կարծիք կազմի: Դիմելով բոլոր ուսանողներին՝ բազմավաստակ մանկավարժը նրանց խորհուրդ տվեց ուսումնառության տարիներին քրտնաջան աշխատել և չտարբերակել կարևոր ու անկարևոր առարկաներ: Միսակ Դավթյանն իր կյանքի անմոռանալի պահերը կապում է ընտանիքի հետ, սակայն որպես գիտնական իր համար անմոռաց է համարում յուրաքանչյուր զեկույց ու գիտական հանդիպում: Գիտնական, դասախոս, ուսումնական գործի կազմակերպիչ. այսպես է բնորոշում ինքն իրեն Միսակ Դավթյանը, ով յուրաքանչյուրի անհաջողությունն իր մեջ է փնտրում:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԿՈՆՖԵՐԱՆՍ

Էրազմուս+ «Հայաստանյան համալսարանների միջազգայնացման ռազմավարության և մարկեթինգի խթանում (BOOST)» ծրագրի շրջանակներում Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում տեղի ունեցավ ազգային կոնֆերանս: Կոնֆերանսին մասնակցում էին ծրագրի գործընկեր համալսարանների և հաստատությունների ներկայացուցիչները՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի Ամերիկյան, Շիրակի պետական, Վանաձորի պետական համալսարաններից, Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայից, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից, Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնից: Հրավիրված էին նաև մարզի բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները:

Կոնֆերանսի առաջին մասում ներկայացվեց ծրագրի շրջանակներում աշխատանքային խմբի կողմից մշակված միջազգայնացման ազգային ռազմավարության նախնական տարբերակը: Ռազմավարությունը կազմված է 4 նպատակներից, որոնցից յուրաքանչյուրին անդրադարձ կատարվեց, իսկ հարցերի ու պատասխանների միջոցով բացահայտվեցին ռազմավարության՝ փոփոխման և վերանայման կարիք ունեցող հատվածները:

Կոնֆերանսի երկրորդ մասում ծրագրում ընդգրկված համալսարանները ներկայացրին իրենց բուհերի ինստիտուցիոնալ ռազմավարության հիմնական խնդիրները, նպատակները և զարգացման ուղիները: Անդրադարձ կատարվեց նաև Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի նախարարական գագաթաժողովին, ինչպես նաև Լիսաբոնի ճանաչման կոնվենցիային:

Հիշեցնենք, որ ծրագրի համակարգողն է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, իսկ ֆինանսավորումը կատարվում է Եվրամիության Էրազմուս+ ծրագրի կողմից:

Համագործակցություն՝ նվիրված տուրիզմի զարգացմանը

Մանկավարժական համալսարանը նախորդ տարվանից համագործակցային ծրագիր է իրականացնում Թբիլիսիի պետական, Վիեննայի Բոկուի բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանների հետ: Ծրագրի նպատակն է Հարավային Կովկասի երկրներում զարգացնել տուրիզմն ու նրա հեռանկարները, համայնքներում տուրիզմի զարգացմամբ իրականացնել միասնական ծրագիր: Համագործակցության ընթացքում ուսումնասիրվել և վեր են հանվել տուրիզմի զարգացման հնարավորությունները Հայաստանի և Վրաստանի տարբեր համայնքերում, վերլուծվել են զարգացման հեռանկարները:

Ծրագրի շրջանակում, այս տարվանից սկսած, Հայաստանում և Վրաստանում՝ համապատասխանաբար ընտրված տարածաշրջաններում իրականացվեցին կայուն տուրիզմի զարգացմանը նվիրված հետազոտական աշխատանքներ: Հայաստանում հետազոտություններն իրականացվեցին Մարմարիկ գետի հովտի Մեղրածոր համայնքում: Աշխատանքներում ընդգրկվել են ինչպես արտասահմանյան մասնագետները, այնպես էլ Մանկավարժական համալսարանի մագիստրատուրայի ուսանողները:

ՀՊՄՀ-ի աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Աշոտ Խոյեցյանը կարևորեց ծրագրի շրջանակում միջդիսցիպլինար կապը. ծրագրի այս փուլին ապագա աշխարհագետների հետ մասնակցում էին նաև ապագա պատմաբաններ, էկոլոգներ, սոցիոլոգներ: «Հետազոտության նպատակն է ուսանողների ուժերով ամենատարբեր մեթոդների կիրառմամբ վեր հանել այս տարածքի տուրիզմի զարգացման այն հնարավոր ուղիները, որոնք հնարավորություն կտան ոչ միայն տարածքի զբոսաշրջության, այլև ընդհանուր զարգացման բացահայտում: Մարզի գյուղերը գտնվում են այնպիսի տարածքում, որտեղ կա բազմակողմանի ռեսուրսային ապահովություն, բայց, ցավոք, ոչ ճիշտ կառավարման պատճառով, համայնքները գտնվում են սոցիալական, տնտեսական ոչ բարվոք վիճակում, որն էլ իր անդրադարձն է ունենում զբոսաշրջության վրա»,- ասաց Աշոտ Խոյեցյանը:

Պրոֆեսորը նկատեց, որ զբոսաշրջության զարգացումը, տուրիստական ինդուստրիայի և համապատասխան ինֆրաստրուկտուրաների ներդրումն այս տարածքի զարգացման ամենալուրջ գրավականը կարող է լինել:

Աշոտ Խոյեցյանը նկատեց նաև, որ մինչ հետազոտությունները սկսելը, դեռևս անցած տարվանից ավստրիացի գործընկերներից ստացել են նմանատիպ գործընթացներ իրականացնելու ուսումնական մեթոդական ուղեցույցներ, որոնցով էլ պատրաստել են մասնակից ուսանողներին: Այսպիսով ուսանողները հնարավորություն ստացան տեսական գիտելիքները գործնականում կիրառել:

«Ծրագրի հիմնական գաղափարը նաև այն էր, որ հետազոտությանը պետք է մասնակցեն ոչ միայն ուսանողները, ղեկավարները, միջազգային դիտորդներն ու փորձագետները, այլև համայնքի բնակիչները: Մեր դեպքում դրանք լիովին ապահովվեցին. ի դեպ, բնակիչները շատ հետաքրքրված էին այս ամենով: Ստացվեց համատեղ հետաքրքիր աշխատանք, որտեղ բոլորն իրենց տեսակետների, մտքերի և կազմակերպչական աշխատանքի արդյունքում մշակեցին հետաքրքիր ծրագրեր: Մեր ուսանողների կատարած հետազոտական աշխատանքները պետք է ներդնեն իրենց համայնքներում»,- ասաց Աշոտ Խոյեցյանը:

«Այս ծրագիրը հետաքրքիր և ուսուցողական փորձառություն է տալիս ուսանողներին: Մանկավարժական համալսարանն օգնում է ուսանողներին՝ զարգացնել տարբեր հմտություններ, սա լավ փորձի փոխանակում է նաև դասախոսների համար: Շատ տպավորված ենք հայ ուսանողների տեսական և գործնական գիտելիքներով: Նմանատիպ միջոցառումները համագործակցության լավ օրինակ են»,- փաստեցին արտասահմանյան մասնագետները:

Սոնա ԱՐԱՄՅԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԱՅՑ

Երևանի Ներսես Մեծի անվան №124 դպրոցի աշակերտները տնօրեն Նաիրա Մարտիրոսյանի և դասղեկ Անահիտ Հովակիմյանի ուղեկցությամբ, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի դասախոս Իզաբելլա Բաբայանի, Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիալական մանկավարժություն բաժնի 2-րդ և 3-րդ կուրսերի մի խումբ ուսանողների հետ բարեգործական այց կատարեցին Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն, որտեղ ներկայացան «Մենք բոլորս ընկերներ ենք» խորագրով միջոցառմամբ:

Դպրոցական տարիներն արդեն հիշողություն են

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հենակետային վարժարանում այսօր տոնական տրամադրություն էր: Վարժարանի 100 շրջանավարտ ստացավ միջնակարգ կրթության ատեստատներ: Շնորհակալության, երախտագիտության խոսքեր էին հնչում աշակերտների շուրթերից. «Երեք տարին շատ բան մեզ տվեց: Այս կրթօջախում մենք կրթվեցինք, իմաստնացանք, ձեռք բերեցինք այնպիսի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, որոնց շնորհիվ կարողացանք պատվով հաղթահարել միասնական քննությունները և բարձր միավորներով ընդունվել բուհեր: Շնորհակալ ենք մեր սիրելի վարժարանին և ուսուցչական կազմին՝ իրենց մեծ նվիրումի և ջանքերի համար. քննություններում ցուցաբերած գերազանց արդյունքները դրա վառ վկայությունն են»:

Վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանը շնորհավորեց շրջանավարտներին, նրանց մաղթեց նորանոր ձեռքբերումներ և հաջողություններ: Նա նշեց, որ հպարտանում է իր սաներով, նրանցով, ովքեր իրենց հույսը կապել էին վարժարանի հետ, որոնց նպատակներն ու սպասումներն էլ հենց այս կրթօջախում իրականացան:

Ավհատական ցուցահանդես

«Նարեկացի» արվեստի միությունում տեղի ունեցավ մանկավարժ, նկարիչ, դիզայներ Հերիքնազ Խաչիկյանի «Հայկական պար» խորագրով ցուցահանդեսը:

Հայկական ավանդական երգ ու պարով մեկնարկած ցուցահանդեսը երաժշտական կատարումներով ջերմացրին Ռուզաննա Ղարաջյանն ու Մերի Քարտաշյանը:

«Այսօր մեզ մոտ ամեն ինչ հեքիաթային է՝ ձեր աշխատանքների գույները, պատկերները: Շնորհավորում ենք ձեզ և մաղթում բազում ցուցահանդեսներ»,- իր խոսքում նշեց «Նարեկացի» արվեստի միության հիմնադիր Նարեկ Հարությունյանը:

Ցուցահանդեսին ներկայացված էին աշխատանքներ՝ հայկական կիրառական արվեստի վերականգնված դդմարվեստ ձյուղից, ինչպես նաև գործվածքների մի քանի տեսակներ (գոբելեն, գորգ, կարպետ):

Ցուցահանդեսը բաց է մինչև հուլիսի 14-ը:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Լույս է տեսել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի առաջին բուժօգնության ամբիոնի դասախոս Հակոբ Գրիգորյանի և Գավառի պետական համալսարանի դասախոս Արմինե Դավթյանի «Ես պատրա՛ստ եմ դպրոց գնալ» ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիոլոգիական և հոգեբանամանկավարժական հետազոտությունների ուսումնամեթոդական ուղեցույց-ձեռնարկը՝ կից ալբոմով: Ձեռնարկի խմբագիրն է մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Վարդիթեր Սիմոնյանը:

Ձեռնարկը և հավելված ալբոմը նախատեսված են ավագ նախադպրոցական տարիքի երեխաների հետ հոգեբանամանկավարժական աշխատանքների ուղղորդման և նրանց զարգացածության մակարդակի հետազոտությունների կազմակերպման համար:

Առաջին անգամ այս ձեռնարկում համակարգված ներկայացված են երեխայի ֆիզիոլոգիական և իմացական (ճանաչողական, ուշադրության, հիշողության, երևակայության, տրամաբանության) զարգացման մակարդակները ստուգող դիդակտիկ պարագաներով և թեստային առաջադրանքներով աշխատելու կանոններն ու գնահատման մոտեցումները: Դիդակտիկ նյութերը տպագրված են առանձին հավելվածով՝ ըստ բաժինների և ըստ պարզից դեպի բարդ սկզբունքների, որը ձևաչափային առավել լայն օգտագործման հնարավորություն է տալիս, նրանցով հնարավոր է ստուգել և՛ երեխայի նորմալ զարգացման մակարդակը, և՛ բացահայտել օժտվածություններն ու խնդիրները:

Առանձնացված չէ խոսքի զարգացման կոնկրետ բաժին, սակայն, գրեթե բոլոր առաջադրանքների միջոցով հնարավոր է ստուգել երեխաների՝ բառիմաստի ընկալման, կապակցված խոսքի ձևավորվածության, բառապաշարաի հարստության մակարդակները:

Ձեռնարկը կարող են օգտագործել նախակրթական հաստատություններում, կրտսեր դպրոցում, երեխաների զարգացման կենտրոններում, իսկ հանրամատչելի ոճի և կառուցվածքի շնորհիվ այն կարող է օգտակար լինել նաև ծնողներին:

ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ

Անուշիկ ԳԻՇՅԱՆ
Մշակութաբանություն, 4-րդ կուրս

26 ՏԱՐՎԱ ԿՐԱԿԸ ԴԵՌ ԱՅՐՎՈՒՄ Է

Յուրաքանչյուր հայի համար հայրենիքը սկսվում և վերջանում է իր ծննդավայրով: Աշխարհի փոքրիկ անկյուններից է իմ ծննդավայրը՝Նոյեմբերյանը: Քաղաքակրթության հնագույն այս օջախում, թավշյա անտառների գրկում և կարկաչուն գետերի հովիտներում անհիշելի ժամանակներից ապրում է մարդու մի տեսակ, որի մարտական կանչից արյունը սառչում է թշնամու երակներում, որն իր ստեղծագործ մտքի, անսասան ուժի և ոգու զորության շնորհիվ ստեղծել և պահպանել է մշակութային ժառանգության բազմաթիվ գլուխգործոցներ՝ անդադար պայքարելով թշնամու դեմ:

Նոյեմբերյանը հարուստ է իր հիշողությամբ՝ մարդկանց բազմաթիվ ճակատագրեր, պատերազմ տեսած ժողովուրդ, անարշալույս առավոտներ: Պատմության քառուղիներով անցած այս ժողովուրդը միշտ պայքարել է ու շարունակում է պայքարել հային բնորոշ համառությամբ, կամքով ու անձնազոհությամբ:

Լինելով սահմանամերձ գոտի՝ համայնքը միշտ եղել է թշնամու կրակահերթերի տակ և դարձել ռազմական գործողությունների կիզակետ: Այդպիսի մի ողբերգական իրավիճակ է եղել 1991 թվականի մայիսի 5-ի լույս 6-ի գիշերը Ոսկեպարի անտառում, երբ Նոյեմբերյանի ՆԳ բաժնի ոստիկանները գնում էին հայրենիքի սահմանը պաշտպանելու, բայց ընկել էին ադրբեջանական օմօնի և խորհրդային զինուժի դավադիր ծուղակը. նրանց տեղափոխող ավտոբուսը միանգամից պայթեցրել էին և խաչաձև կրակ բացել գնդացիրներից ու ավտոմատներից: Տղաները չէին հասցրել նույնիսկ մեքենաներից դուրս գալ: Հարձակման ենթարկվելով ոճրագործ թշնամու կողմից՝ զոհվեցին նոյեմբերյանցի 14 ոստիկաններ, մի քանի տասնյակ ոստիկաններ էլ գերեվարվեցին և ծանր, սարսափելի օրեր ու ամիսներ անցկացրին ադրբեջանական բանտերում, խոշտանգումների ենթարկվեցին, չընկճվեցին, դիմացան հերոսաբար՝ հույս տալով միմյանց:

Գերեվարվածների թվում էր նաև հայրս, և միգուցե դա է պատճառը, որ այս իրադարձությունը դրոշմված է մտքիս մեջ, ու այն չարաբաստիկ լուսաբացը նոյեմբերյանցիների հիշողության մեջ մնացել է որպես եղերական լուսաբաց:

Զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր է կառուցվել և՛ Նոյեմբերյանում, և՛ դեպքի վայրում: Յուրաքանչյուր տարի մայիսի 6-ին բազում տավուշցիներ իրենց հարգանքի տուրքն են մատուցում Նոյեմբերյան քաղաքում վեր խոյացող՝ զոհված միլիցիոներների հուշահամալիրում, որը կառուցվել է 1994 թվականին Ներքին գործերի բաժնի նախկին շենքի տեղում: Հուշակոթողը սրբատեի է, որտեղ տնկած բարձրուղեշ, սլացիկ բարդիներից յուրաքանչյուրը զոհերից մեկին է մարմնավորում, իսկ հուշապատին գրված են նրանց անունները: Հուշապատը սխրագործության հիշողությունն է, իսկ այդ հիշողությունը անցյալը չմոռանալու և ապագային արժանապատվորեն նայելու համար է:

Սա մեզ համար դարձել է ավանդույթ, և արդեն 26 տարի է, ինչ չենք խախտում այդ ավանդույթը: Իսկ այս տարի մայիսի 6-ին լրացավ ողբերգության 26 տարին…

Այս պատմությունը իմ սրտին ավելի քան հարազատ է, քանի որ ինքս էլ մանկուց չեմ խախտել ավանդույթը. հայրիկս է այդպես սովորեցրել՝ խոսելով իր մարտական ընկերների մասին: 6 տարեկան էի, երբ հայրս առաջին անգամ ծաղիկ տվեց ձեռքս ու տարավ հուշակոթողի մոտ, հիշում եմ նրա խոսքերը, այսպես ասաց.-Նրանք բոլորն էլ իմ եղբայրներն էին, պետք է միշտ հիշենք նրանց…

Սա մնացել է հիշողությանս մեջ, ու միշտ հիշելու եմ: Այո՛, արդեն 26 տարի է անցել արյունոտ լուսաբացից, բայց վերքերն այդպես էլ չեն սպիացել տավուշցիների սրտերում: Ցավն ու հպարտությունը իրար են ձուլվել: Գերությունից ազատվելուց հետո ոստիկանները հենց դեպքի վայրում՝ անտառի բարձունքում, մեկ այլ խաչքար-հուշակոթող կանգնեցրին՝ հավերժացնելով զոհված ընկերների հիշատակը: Խաչքարի աջ և ձախ կողմերում գրված են նրանց անունները, և ամեն տարի մայիսի 6-ին ընկերները կարծես թե այս ձևով հաղորդակցվում են հավերժացածների հետ: Ավանդույթի համաձայն, ողջ մնացած ոստիկանները մայիսի 5-ի լույս 6-ի գիշերը դեպքի վայրում խարույկ են վառում՝ վերհիշելով ծանր ու դաժան լուսաբացը:

Նախկինում հաճախակի էի հարցեր տալիս հայրիկիս այդ սարսափազդու դեպքերից, բայց նա խուսափում էր պատասխանել, ես հետո գիտակցեցի, որ հիշողությունը կրկին ու կրկին ցավ է պատճառում նրան. հայրս հիշում է կորցրած ընկերներին, գերության դժոխային օրերը, այն, ինչ զգացել է իր մաշկի վրա և ընդհանրապես պատերազմը՝ իր ողջ դառնությամբ: Հարցերիս որոշ չափով փորձում էր պատասխանել տատիկս, երբ ինչ-որ բան էր պատմում այդ օրերից, միշտ արտասվում էր, այսօրվա պես հիշում եմ նրա պատմություններն ու արցունքոտված աչքերը:

Սա մեր ազգային ազատագրական պայքարի ցավագին դրվագներից էր… Երբ ադրբեջանական իշխանությունների և խորհրդային բանակի կողմից իրականացվեց տխրահռչակ «Օղակ» օպերացիան: 26 տարի առաջ կատարվեց մի ողբերգություն, որը հավերժ կմնա որպես մեր սահմանամերձ համայնքի արյունոտ էջ և երբեք էլ չի մոռացվի:

Սերունդները դեռ երկար կհիշեն ոսկեպարյան արյունահեղությունը և կհարգեն զոհվածների հիշատակը, քանի որ նրանք անմահ են և ապրում են մեր հոգում ու հիշողության մեջ: Իսկ սահմանամերձ Տավուշի պաշտպանները պիտի լցվեն վաղվա օրվա հանդեպ վստահությամբ և հաղթանակների հավատով:

26 տարվա կրակը դեռ այրվում է…

Անի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Մշակութաբանություն, 3-րդ կուրս

ԿԱՊՆԻՆ ՃՅՈՒՂԵՐ Է ՏԱԼԻՍ

Ես հայ եմ, իմ արմատները գալիս են Հաճնից: Իմ տատուպապերը եղել են հաճնցի, և հետո մեր ցեղի պատմությունը այնպես է դասավորվել, որ մենք հայտնվել ենք Սիսիանում, և Սիսիանը դարձել է իմ ծննդավայրը:

Ես դաստիարակվել եմ այնպիսի շրջապատում, որտեղ միշտ բարձր են գնահատվել հայրենիքն ու ազգային ինքնությունը:

Մեր ընտանիքում ընդունված է եղել ամեն երեկո հարազատ-բարեկամներով հավաքվել մեկի տանը, թեյել, զրուցել ինչ-որ թեմաներից ու ընկնել հիշողությունների գիրկը:

Հիշում եմ՝ կրկին հավաքվել էինք մեր տանը. այս անգամ խոսքը հասել էր պապիկիս՝ Հարությունին: Պապիկս պատմում էր իր պապի՝ Նազարեթի մասին: Նազարեթի հորը հաջողվել է թուրքական յաթաղանից խույս տալ, ժողովել ընտանիքն ու բռնել գաղթի ճանապարհը: Սակայն հենց Հաճնի մոտերքում անզգամ թուրքերը տասնիննամյա պատանու՝ Նազարեթի աչքի առաջ մորթել են ծնողներին, սրատել ու խոշտանգել եղբայրներին ու քույրերին: 1915 թվականը խաթարել է այդ ստեղծագործ ու համերաշխ ընտանիքի խաղաղ առօրյան ու բեկել բոլորի ճակատագրերը: Սկսվել է համատարած գաղթ ու կոտորած:

«Դժոխքով եմ անցել, բայց ողջ մնացել, թաց աչքով ու չսպիացող վերքը սրտիս՝ ստիպված եմ եղել շարունակել գերդաստանիս շառավիղը»,-ասում էր Նազարեթ պապը:

Տան միակ ճրագը՝ Նազարեթը, հանգրվանում է Կիլիկիայի Ջիհան քաղաքում, որտեղ առայժմ կոտորածի վտանգ չկար, քանի որ ֆրանսիական զորքերի տնօրինության տակ էր: Հենց այնտեղ էլ ամուսնացել է Մեյբոլ անունով մի աղջկա հետ: 1921 թվական. նորից գաղթ, երիտասարդ ամուսինները մի կերպ ընկնում են Սիրիա:

Նազարեթը «բնակարան» է կառուցում փայտի մնացորդներից: Այդ տանն էլ 1922-ին ծնվում է առաջնեկը, որին կնքում են պապի անունով՝ Խաչատուր: Այնուհետև ծնվում են մյուս որդիները՝ Զոհրապը, Ազատը, Հակոբը, Սամվելը, Մանուկը, Գրիգորը…

1947 թվականի օգոստոս. Բեյրութի նավահանգիստը ծիծաղի, հրճվանքի, լաց ու կոծի մեջ էր: «Պոբեդա» նավը իր աստիճանները բացեց թափառումներից բզկտված հայերի առջև: Իրարանցման մեջ, իրարից բռնած, ճգնում էին իրար չկորցնել Խաչատրյանների ընտանիքի տասն անդամները:

Նավը բարձրացրեց խարիսխները, դանդաղ լողաց ծովի անհունները՝ մնացող հայերի հայացքներն ու հույսը տանելով իր հետ:

Հայրենի հող, Բաթում…Ինչպիսի՜ ապրումներ, գրկախառնություններ նույնիսկ անծանոթների հետ:

Ապրելը դժվար էր. սննդամթերք չկար, ամեն ինչ պակաս էր: Խաչատրյանների բազմանդամ ընտանիքին տրամադրեցին մեկ անհրապույր սենյակ: Որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո նրանք ապաստան գտան Գորիսում, այնուհետև տեղափոխվեցին Սիսիան:

«Թափառումը մտել է մեր արյան մեջ»,-կատակով ասաց Նազարեթի մեծ որդի Խաչատուրը:

Նրանք գոհ էին բոլորից, շրջապատի մարդկանցից էլ, ովքեր սիրով էին շրջապատել պանդխտության մեջ օտարի խեթ հայացքներ տեսած ընտանիքին: Եվ համաչափ սկսեց բաբախել Խաչատրյանների կյանքի զարկերակը՝ խաղաղ, անարյուն երկնքի տակ:

Խաչատրյան եղբայրները սկսեցին գրել իրենց կենսագրության առաջին էջերը հայրենիքում: Նրանք ձուլվեցին Սիսիանում ծնվող նոր ձևավորվող տարբեր արհեստների հետ և դարձան բաձրակարգ արհեստավորներ: Այնուհետև գիտակցելով կրթության ուժը՝ նրանց թոռներն ու ծոռները ընդունվեցին բարձրակարգ բուհեր, հետագայում դառնալով հասարակության համար պիտանի մասնագետներ: Իսկ նրանց որդիները պատվով ծառայեցին Սովետական Միության բանակում, նվիրվեցին հայրենիքին, որը նրանց պարգևեց հինավուրց նախնիների սրբազան հողը, երկիրը, տվեց պետականություն, ազատություն, ազատ հայերեն խոսելու իրավունք:

Եվ հպարտությամբ կարող եմ նշել, որ նրանք այսօր էլ հայրենասիրական ոգով են շարունակում իրենց գործը: Ունենք հերոս որդիներ, ովքեր մասնակցել են ղարաբաղյան հերոսամարտին և ապրիլյան քառօրյային, և մինչև օրս էլ պաշտպանում են հայոց անառիկ սահմանները՝ օրինակ հանդիսանալով հաջորդ սերունդների համար:

Ահա ասպիսին է եղեռնից մազապուրծ եղած պապիկիս՝ Նազարեթ Խաչատրյանի և նրա գերդաստանի կյանքի պատմությունը:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 12.07. 2018 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ